

Ճ

Ք-55

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ԱՇՈՏ ՍՈՒՐԵՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԿՆԻՔՆԵՐԸ
ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ
ԿՆՔԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Է. 00. 03

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՅՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 1997

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականումը յուրևր: Հին Աշխարհի պատմության և մշակույթի ամենաինքնատիպ դրամորոմները մեկը՝ կնիքներն են: Իրենց կիրառման եղանակներով, կառուցվածքով, ոճական և հորինվածքային առանձնահատկություններով, արժանագիր տեքստերի արժանահավասարումը, նյութի, գույնի, չափի, կրելածեղի բազմազանում, տարբեր տարածաշրջաններում ունեցած անհավասարաչափ սփռվածություն Փենոմենով և տեղեկատվական այլ հնարավորություններով, կնիքներն այսօր Հին Արևելքի պատմության, մշակույթի, արվեստի, առասպելաբանության և այլ բնագավառների ուսումնասիրությանն անհրաժեշտ այն կարևոր սկզբնաղբյուրներն են, որոնց հենքի վրա հնարավոր են էնեոլիթի-երկաթի դարաշրջանների էթնո-մշակութային, սոցիալ-տնտեսական և պատմա-քաղաքական բնույթի հիմնախնդիրների առավել հավանական վերակազմումը յուրևրն ու հիմնավորումները: Մասնագիտական գրականության մեջ այս գիտաճյուղը ստացել է ,գլիպտիկա, կամ ,սֆրագիստիկա, անվանումը:

Սկզբնապես հանդես գալով որպես առանձին մարդու կամ մարդկանց ոչ մեծ խմբի, ապա համայնքի, հետագայում՝ տոհմի, իսկ ավելի ուշ նաև պետությունների ստիտոնների կանգնած խավերի /ուզմական ավազանի, քրմական դաս, վաճառականություն, արհեստավորների դաս և այլն/ և ամենալայն իրավունքներով օժտված անհատների /առաջնորդ, ցեղապետ, քրմապետ, թագավոր, թագուհի, թագածոհանգ, զորահրամանատար և այլն/ անձնական սեփականությունը, սոցիալական կարգավիճակն, իշխանությունը և անգամ էթնիկական պատկանելությունը մատնանշող առիթուներ, կնիքները էայն կիրառությունը գտան կյանքի, կենցաղի և հասարակական-քաղաքական գործունեության ամենատարբեր ոլորտներում: Որտեղ միանգամայն հասկանալի է, որ կնիքների մակերեսներին արված փորագրություններն, ինչպես նաև նրանց կիրառման եղանակն ու կառուցվածքը պատահական կամ կամայական բնույթ էր կարող կրել: Աշխարհագրական, էթնիկական և անգամ մշակութային միջավայրերը թողել են իրենց որոշակի ազդեցությունը թվարկված հատկանիշների ձևավորման վրա: Նշված հարցերն արդեն մասնագետների մի-քանի սերնդի հատուկ ուսումնասիրությունների առարկա են: Ըստ որում, քննության առնելով հրապարակի վրա առկա կնիքների որոշ տեսակներ, վերջիններս /Ժ.Մենան, Ո.Ռիորդ, Լ.Ղեկերկ, Լ. Դեյապորտ, Օ.Վեբեր, Հ.Փրանֆորտ, Ա.Մորթգատ, Գ.Օֆներ, Է.Փորդա և այլոք/ հիմնականում բավարարվել են նրանց առանձին խմբերին կամ ենթախմբերին հատուկ ձևերի և կիրառման եղանակների անջատ-անջատ ուսումնասիրման և մեկնաբանման խնդիրներով, աշխատելով խուսափել ընդհանրացնող եզրակացություններից: Իսկ այն եզակի հետազոտողները /Բ.Բյուրեման, Բ.Բրենտյես, Վ.Աֆանասև/, որ այնուամենայնիվ փորձել են մեկ ամփոփ աշխատություն մեջ

Աշխատանքն իրականացվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Ա. Եսայան

Պաշտոնական ընդդիմախոսներ.
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝
Բ. Ն. Առաքելյան
Պատմական գիտությունների քեկնածու՝
Ա. Վ. Զոսյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կկայանա 1997 թ. 19/viii ին, ժամը 13⁰⁰ ին
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտին
առընթեր գործող դոկտորի գիտական աստիճան շնորհող
(007) Մասնագիտական խորհրդում
(հասցեն՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
Երևան - 375025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է ----- 1997թ.:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պատմ. գիտ. քեկնածու  Հ.Ա.Մեղրոնյան

խմբավորել հինարևելյան կնքագործու լյան ընդ որ առանձնահատկութիւններն իրենց վրա կրող օրինակները, սահմանափակվել են միայն ոճական և հորինվածքային ընդհանրութիւններով վերահաման խնդիրներով, ապաղ յուսն փորձեր անելով, միայն վերջիններիս հիման վրա ստացված արվուսըներով, լուծել կնիքների պարբերացման և ժամանակագրութիւնյան հարցեր: Ինչ վերաբերում է Հայկական Լեռնաշխարհից հայտնաբերված և մ.թ.ա. 5-1-ին հազ. թվագրվող կնիքներին, ապա վերջիններս ընդհանրապես չեն քննարկվել հինարևելյան կնքագործութիւնյան համակարգում և, ըստ էութիւնյան, դուրս են մնացել գիտական շրջանառութիւնից: Խիստ անհրաժեշտ և այժմեական այդ հիմնախնդիրների նորովի մեկնաբանմանն էլ նվիրված է սուսն աշխատանքը:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Հինարևելյան կնիքներով և կնքագործութիւնյամբ զբաղվող մասնագետների ուշադրութիւնյան կենտրոնում 20-րդ դարի 30-40-ական թվականներից ծառայան պարբերացման, թվագրման, ոճական առանձնահատկութիւնների վերահաման և դրանց հիման վրա կնքագործական դպրոցների առանձնացման խնդիրները: Արդյունքում, քննարկվող նյութն, աստիճանաբար անշատվելով ընդհանուր և վերացական, , հինարևելյանից, , կոնկրետ տարածքային, մշակութային և նուսնիսկ էթնիկական պատկանելութիւն ձեռք բերեց, ավելի որոշակի դարձնելով տարբեր ցեղախմբերի, պետական կազմավորումների և անգամ ժողովուրդների դերը կնքագործութիւնյան այս կամ այն ոճի և հորինվածքի ստեղծման, նյութի ընտրութիւնյան, ինչպես նաև կնիքների կառուցվածքի, կրելածեի, կիրառման և այլ արտահայտչանկանների մշակման գործում: Այս ամենի շնորհիվ ձևավորվեց գիտական մի տեսակետ, որի համաձայն հինարևելյան կնքագործութիւնյան վաղ շրջանի ողջ տեսականին բաժանվում է երկու ենթախմբերի /1. դրոշմ-կնիքներ, 2. գլանածե կնիքներ/ և ըստ այդմ էլ վերլուծվում են նրանց պարբերացման, ժամանակագրութիւնյան, ոճի և հորինվածքային պատկանելութիւնյան հարցերը: Ինչպես հին, այնպես էլ նորօրյա աշխատանքներում Հայկական Լեռնաշխարհը փաստորեն բացակայում է , , Հին Արևելք, , պատմա-աշխարհագրական և էթնո-մշակութային հասկացութիւնների համակարգից, իսկ տեղից հայտնաբերված և արևմուտյան թանգարաններում պահվող նյութն անշատ-անշատ ներկայացված է , , Արևելյան Անատոլիա, , և , , Ուրարտու, , տերմինների տակ: Ուստի մեր աշխատանքի նպատակն է, ձեռքի տակ առկա հնագիտական նյութի համակողմանի ուսումնասիրութիւնյան հիման վրա նորովի համակարգել Հին Արևելքի մ.թ.ա. 7-1-ին հազ. կնիքների հարուստ հավաքածուն, վերհանել յուրաքանչյուր տարածաշրջանին բնորոշ կնքագործական առանձնահատկութիւնները, հնարավորութիւնյան սահմաններում տալ դրանց ձևավորման ու զարգացման սոցիալ-տնտեսական, էթնո-մշակութային և պատմա-քաղաքական դրոշմատճանները և, վերջպես, առջին անգամ փորձ անել ներկայացնել Հայկական Լեռնաշխարհի կնքագործութիւնյան տեղն ու դերն այդ գործընթացների համակարգում:

Աշխատանքի մեթոդական հիմքը: Առենխոսութիւնյան իրականացվել է հինարևելյան կնիքների և կնքագործութիւնյան վերաբերյալ ժամանակի ընթացքում առաջ քաշված քազմաթիվ հարցադրումների և կարծիքների քննական մեկնութիւնյան և նորովի մեկնաբանման սկզբունքով, ինչի համար կիրառվել է կոմպլեքսային հետազոտման մեթոդը: Այն իր մեջ ներառում է խորոտ առարկանյութի կիրառական-տիպաբանական և պատմա-համեմատական վերլուծութիւնյան համադրութիւնյան արդյունավետ եղանակը:

Աղբյուրները և գրականութիւնյան տեսութիւնյան: Ուսումնասիրութիւնյան համար սկզբնաղբյուրներ են հանդիսացել Հին Արևելքի տարբեր տարածաշրջաններից հայտնաբերված շուրջ 4000 կնիքներն ու կնքադրոշմները, Հայկական Լեռնաշխարհի և հարակից շրջանների հնագիտական հուշարձաններից պեղված և հստակ թվագրութիւնյան ունեցող համապատասխան նյութերը, հեղինակի կողմից Սիրիայում հետազոտված շուրջ 500 նոր և դեռևս գիտական շրջանառութիւնյան մեջ չմտած նմուշներն, ինչպես նաև հինարևելյան կնքագործութիւնյան վերաբերյալ ամենաքազմազան տեղեկատվութիւնյան պարունակող /և, ըստ էութիւնյան, սկզբնաղբյուրի արժեք ունեցող/ մշակութաբանական, հնագիտական, արվեստաբանական, ազգագրական, առասպելաբանական, սոցիոլոգիական և այլ բնութիւնյան հետազոտութիւնների տվյալները:

Իր շուրջ երկդարյա պատմութիւնյան ընթացքում կնքագիտութիւնյան անցել է անհաղորդութիւնների, որոնումների, ինքնահաստատման ու նվաճումների ու դյուրին ծանալարհ: Եթե 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի ուսումնասիրողների /ժ.Մենան, Լ.դե Նլերկ, Լ.Գեյլպոտ, Ու.Ուորդ, Վ.Սփելլերս, Օ.Վեբեր և այլոք/ գիտական շնքերը հիմնականում ուղղված էին արևմուտքի խոշոր թանգարաններում և մասնավոր հավաքածուներում կենտրոնացված հինարևելյան կնիքների հատկանշական ցուցակների կազմման ու հրատարակման գործին, ապա 20-րդ դարի 30-ական թվականներից մասնագետների ուշադրութիւնյան կենտրոնում ծառայան նրանց ժամանակագրական և տարածական սահմանների ճշգրտման, ոճական և հորինվածքային առանձնահատկութիւնների վերահաման, հինարևելյան կնքագործական կենտրոնների առանձնացման և մի խումբ այլ հարցեր: Այս ամենն իր արտահայտութիւնյանը գտավ երկու խոշորագուսն արևելագետներ՝ Հ.Փրանկֆորտի և Ա.Մորթգատի հիմնարար մենագրութիւններիում: Աշխատանքներ, որոնք փաստացի նյութի ընդարկման ծավալով, պարբերացման ու ժամանակագրութիւնյան մշակված համակարգով, ոճական և հորինվածքային առանձնահատկութիւնների վերահաման սկզբունքներով, փորագիր տեսարանների միժո-պոետիկական բովանդակութիւնյան համարձակ վերակազմութիւններով, իրենց գիտական արժեքն ու արդիականութիւնը չեն կորցրել մինչև օրս: Գիտական այն հենքի վրա մեր դարի 40-80-ական թվականներին ուսումնասիրութիւնյան կատարած նոր մասնագետները /Գ.Օմեր, Է.Փորադա, Պ. Ամյե, Թ. Բեռն, Հ.Բոնն, Մ.Բրանդես, Բ.Բրենտյես, Բ. Բյու-

քանան, Ռ.Բյուր, Պ.Բեք, Պ.Ալեքսանդեր, Ռ.Գալստյան, Գեղուկոն և այլոք/ ձեռքի տակ ունենալով լավ թվագրվող հնագիտական համալիրներից հայտնաբերված նոր նմուշներ, ավելի խորացրին և ընդլայնեցին գիտելիքները հինարևելյան կնիքների ու կնքագործության վերաբերյալ: Ըստ որում, վերոհիշյալ աշխատանքներում մոտեցումների միասնությունն ու առաջադրված լուծումների ինչ-որ տեղ միօրինակությունը, թերևս, կարելի է բացատրել այն հանգամանքով, որ մինչև մեր դարի 70-80-ական թվականները կնքագիտությունն, ըստ էության, արևմուտքի ուսումնասիրողների մենաշնորհն էր և, ըստ այդմ էլ, գերազանցապես զարգացել էր տեղի կենտրոններում մշակված և սեփական գիտական, ,ստաղաթոնից,, շեղում չենթադրող մեկնաբանությունների պայմաններում: Մեր կարծիքով այդ ,միօրինակություն,, պատճառներից մեկն այն է, որ վերոհիշյալ ուսումնասիրողների հիմնական մասը, փաստորեն ժիշտ ընկալելով կնիքներն իրարից զատող ամենակարևոր հատկանիշը՝ դրոշմումն իրականացնող եղանակների տարբերությունն, այնուամենայնիվ չկարողացավ ձեռքագտավել հնից եկող և համեմատաբար լավ մշակված ձև-կառուցվածքային բաղադրամասն սկզբունքից և ուշադրությունն առավելապես կենտրոնացրեց կնիքների արտաքին /կառուցվածքային/ տարբերությունների վերահաման ու վերջիններիս դրոշմող մակերեսների փորագրված տեսարանների մեկնաբանման խնդիրներին: Մյուս պատճառը, թերևս, կապված էր հինարևելյան կնիքների ողջ ընտրանու երկենթախումբ /1. դրոշմ-կնիքներ, 2. գլանաձև կնիքներ/ ոչ արդյունավետ ստորաբաժանման և ենթախմբերից յուրաքանչյուրը մյուսից անջատ ուսումնասիրման գործելակերպի հետ: Վերջինիս հետևանքը եղավ այն, որ մասնագետների մեծագույն մասն իրեն նվիրեց առավել հրապուրիչ, մեծաքանակ և շահեկան՝ գլանաձև կնիքների դասակարգման և ժամանակագրության հարցերի հետազոտմանը, ,մոռանալով,, կիրառման այլ եղանակ ունեցող օրինակների գոյությունը և խուսափելով ողջ տեսականուն նվիրված ընդհանրացնող ուսումնասիրություններից: Ինչ վերաբերում է այն ոչ մեծաթիվ ,համարձակներին,, /Բ.Բյուրանան, Բ.Բրենտոյես, Ռ.Գալստյան/, որոնք այնուամենայնիվ փորձ արեցին համատեղել երկու ենթախմբերին վերաբերող ուսումնասիրություններն, ապա վերջիններս էլ չհանդգնեցին վեր բարձրանալ կնիքների մակերեսներին փորագրված ոճ-հորինվածքային տեսարանների բովանդակության բացահայտման և առանձին կերպարների մեկնաբանման գործելակերպից, դրանով իսկ առաջին հերթին լուծելով առասպելաբանության, ապա նոր միայն կնքագիտության հետ առնչվող խնդիրներ: Այսինքն, ըստ էության, կնքագիտությունն առաջ ընթացավ ոչ այնքան բուն կնիքների, որքան վերջիններիս վրա փորագրված տեսարանների վերլուծություն, անշուշտ խիստ անհրաժեշտ, բայց միևնույն ժամանակ կնքագիտությունն առջև ծառայած բազմաթիվ հիմնահարցերի մեկնաբանման համար մասամբ բավարար, մանապարհով: Այսպիսին է իրավիճակը նաև այժմ և վերոհիշյալն իր արտահայտությունն է գտել այն մասնագիտական գրականության մեջ, որն

օգտագործվել է սույն աշխատանքն իրականացնելիս:

Աշխատանքի գիտական նորայնությունը: Ըստ էության, նյութի ընդգրկման ծավալով և առաջադրված մոտեցումների նոր համակարգով, հինարևելյան կնիքների ու կնքագործության մասին այս աշխատանքն իր նախադեպը չունի Հայաստանի էնեոլիթի-երկաթի դարաշրջանների ուսումնասիրությանը նվիրված հայ հնագիտական գրականության մեջ: Ատենախոսությունն առավել նկատելի նորամուծությունները հետևյալներն են:

1. Առաջին անգամ Հայկական էնեոաշխարհից գտնված մ.թ.ա. 5-1-ին հազ. կնիքները քննարկվում են Հին Արևելքի շուրջ 4000 կնիքների ու կնքադրոշմների համակարգում: Ըստ որում, ատենախոսությունն 63 աղյուսակներում ներկայացված 767 կնիքներից և կնքադրոշմներից 103-ը մինչև օրս հրատարակված չեն և նոր են դրվում գիտական շրջանառության մեջ:

2. Առաջին անգամ Հին Արևելքի /այդ թվում նաև Հայկական էնեոաշխարհ/ կնիքներն ու կնքադրոշմները քննարկվում են ոչ թե գուտ առասպելա-արվեստաբանական, այլ՝ նաև պատմա-մշակութային տեսանկյունից: Հատկապես ընդգծվում է նրանց դերը տարածաշրջանի սոցիալ-տնտեսական, ռազմա-քաղաքական և այլ գործընթացների ուսումնասիրության համատեքստում:

Աշխատանքի կիրառական նշանակությունը: Ատենախոսության մեջ արված մեկնաբանություններն ու եզրահանգումներն, ինչպես նաև աղյուսակներում, բարտեզներում և գրաֆիկներում ներկայացված փաստացի նյութերը լայնորեն կարող են օգտագործվել Հայկական էնեոաշխարհի և հարակից շրջանների, ինչպես նաև ողջ Մերձավոր Արևելքի վաղ շրջանի պատմության, մշակութային, արվեստի, հնագիտության, առասպելաբանության, բանահյուսության, լեզվաբանության, ազգագրության և գիտության այլ բնագավառների ամենաբազմազան հիմնախնդիրների ուսումնասիրության գործում:

Աշխատանքի պաշտոնական հավանությունը: Ատենախոսությունը քննարկվել և հավանության է արժանացել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վաղ հնագիտության բաժնի նիստում, ինչպես նաև ինստիտուտի գիտա-մեթոդական սեմինարում: Աշխատանքի որոշ հիմնադրույթների վերաբերյալ գեկուցումներ են կարդացվել հարապետական /Երևան 1980, 1981, 1982, 1988, 1985, 1987, 1989, 1991, 1995 թթ, Գյումրի 1994, 1996թթ/ և միջազգային /Մոսկվա 1981թ., Երևան 1982թ., Թբիլիսի 1997թ./ գիտական նստաշրջաններում: Զեկուցումների հիմնադրույթները սուղագրված են: Ռիսումնասիրությունն մեջ արժանացած որոշ հարցեր առանձին հոդվածների ձևով սուղագրվել և սուղագրության են հանձնվել հանրապետական և արտերկրի /Մոսկվա, Կանադա, Հոնոլուլու/ գիտական ամսագրերում և ժողովածուներում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից /որոնցից յուրաքանչյուրը ստորաբաժանված է հինգ ենթագլուխների/, վերջաբանից, համառոտագրություններից, օգտագործած

455 միավոր զրականութւյան ցանկից, աղյուսակների ցուցակից և 70 աղյուսակներից /ներառյալ 4 բարտեզ և 3 գրաֆիկ/:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներածութիւնը: Այստեղ ներկայացված են հետազոտութիւյան նպատակն ու խնդիրները, դրանց իրականացման տեսական և մեթոդական հիմունքները, առաջ բաշխված նոր հիմնավորումների անհրաժեշտութիւյունը, ատենախոսութիւյան գիտական նորայնութիւյունն ու կիրառական նշանակութիւյունը: Հանգամանորեն տրված է օգտագործված սկզբնաղբյուրների և մասնագիտական զրականութիւյան վերլուծութիւյունը: Հատուկ ընդգծված է աշխատանքի այժմականութիւյունն ու հրատապութիւյունը:

Գլուխ Առաջին: Հինարևելյան կնիքների դասակարգում և պատմա-ժամանակագրական վերլուծութիւյուն:

Մերձավոր և Միջին Արևելքից, Միջերկրականի ավազանից և հարակից շրջաններից հայտնաբերված կնիքների և կնքադրոշմների ուսումնասիրութիւյունը հնարավորութիւյուն է ընձեռում քննարկվող արտեֆակտների ընտրութիւյուն, ըստ կիրառման եղանակի, նորովի բաժանել չորս /և ոչ թե երկու՝ ինչպես արվում էր ավանդաբար/* ենթախմբերի:

- 1-ին ենթախումբ.- Դրոշմ-կնիքներ /օգտագործվել են մեկ սեղմումով մեկ ամբողջական դաշվածք ստանալու համար/:
- 2-րդ ենթախումբ.- Գլանաձև կնիքներ /գործածվել են գլորման եղանակով դաշված պատկերների գոտի ստանալու համար/:
- 3-րդ ենթախումբ.- Կոնաձև կնիքներ /օգտագործվել են ինչպես իրանի փորագրութիւյունները գլորման եղանակով քրտառապելու, այնպես էլ հիմքին արված պատկերները մեկ սեղմումով դաշելու համար/:
- 4-րդ ենթախումբ.- Պրիզմայաձև կնիքներ /կիրառվել են իրանի նիստերին և հիմքին արված փորագրութիւյունների հաջորդական սեղմումներով առանձին պատկերներ ներկայացնող դաշվածքների շարք ստանալու համար/:

Վերը նշված ենթախմբերում առանձնացված կնիքները միօրինակ չեն և դրոշմներով են ներենթախմբային տարբերակներով: Տեսականորեն քննարկվող կնիքները տարբերակի մակարդակում կարելի է զանազանել ըստ նյութի, ձևի, փորագրման հնարքների, ոճի, գույնի, չափերի և այլն: Նման փորձեր արվել են արդեն: Սակայն ստացված եզրահանգումները ոչ միշտ է, որ եղել են հավաստի, վերջնական և ընդհանրացնող: Առավել ուշագործ արդյունքներ են

* Այս մասին ավելի մանրամասն տես սեղմագրի, Աղբյուրներ և զրականութիւյան տեսութիւյուն, բաժնում:

տվել կնիքների հորինվածքային առանձնահատկութիւյուններով արվող տարբերակումները: Ըստ որում, մինչև այժմ մասնագիտական զրականութիւյան մեջ հիմնականում կիրառվել է հորինվածքային առանձնահատկութիւյունների բաղդատման երկտարբերակ համակարգ:

- 1-ին տարբերակ.- Երկրաչափական քնույթի պատկերներով կնիքներ,
 - 2-րդ տարբերակ.- Տեսարանային պատկերներով կնիքներ:
- Նման մոտեցումն, ըստ մեզ, արհեստականորեն նեղացրել է կնիքների վրա ներկայացված պատկերների տեղեկատվական հնարավորութիւյունների ուսումնասիրման տիրույթը, փոքրացրել հորինվածքային առանձնահատկութիւյունների համադրման և զանազանման արդյունավետ եղանակների քանակը և, ըստ այդմ էլ, տվել ոչ ամբողջական պատկեր: Պատճառը, թերևս, , հորինվածք /կոմպոզիցիա/, , հասկացութիւյան ոչ լրիվ ընկալման և իմաստավորման մեջ է: Մեր կարծիքով, , հորինվածք /կոմպոզիցիա/, , հասկացութիւյան տակ տվյալ դեպքում պետք է հասկանալ կնիքների դրոշմող մակերեսներին առկա նշանա-պատկերային փորագրութիւյունների և վերջիններին ժանրա-սյուժետային /իմաստային/ ծանրաբեռնվածութիւյունների միասնութիւյունը: Այլ խոսքով, հորինվածքն, ըստ էութիւյան, կնիքների դրոշմող մակերեսներին փորագրման եղանակով ներկայացված տեղեկատվութիւյունների ընկալման համակարգն է, իր տարամակարդակ դրսևորումներով: Այդ դեպքում, որն է ուրեմն կնիքների հորինվածքային առանձնահատկութիւյունների տարբերակման միավոր-հատկանիշը: Տեսականորեն որպես այդպիսին կարող է ընդունվել հորինվածքի ուղղութիւյունը /աջից ձախ կամ ձախից աջ/, նրանում առկա կերպարների կամ սյուժետային խմբերի քանակը, ռեգիստր-բաժանարարների և լոկուսների գոյութիւյան կամ բացակայութիւյան փաստը, երկրաչափական, կենդանական, բուսական, մարդկային և այլ պատկերների առկայութիւյան, բացակայութիւյան կամ համադրութիւյան հանգամանքը և այլն: Մեր կարծիքով, փորագրութիւյունների նման կամայական մասնատումներից յուրաքանչյուրը հորինվածքային առանձնահատկութիւյունների տարբերակման միավոր-հատկանիշ դարձնելը /և դա այն դեպքում, երբ մենք միայն ենթադրում ենք տեսարանի իմաստային ծանրաբեռնվածութիւյունը և, ըստ այդմ էլ, իրավասու չենք այն ինքնակամ բաղդատելու/, անտարակույս հանգեցնում է իրականութիւյանը քիչ համապատասխանող, կիսատ և աղճատված արդյունքների: Այդ իսկ պատճառով էլ կնիքներից յուրաքանչյուրի դրոշմող մակերեսին /կամ մակերեսներին/ առկա հորինվածքն ընդունելով առանձին, ամփոփ և անբաժանելի ամբողջութիւյուն, մենք նպատակահարմար գրտանք, որպես վերջիններին տարբերակման միավոր-հատկանիշ ընդունել հորինվածքներից քաղվող օբյեկտիվ և սուբյեկտիվ տեղեկատվութիւյունների մակարդակային տարբերութիւյունները: Վերջիններս, մեր կարծիքով, ենթադրում են չորս մակարդակ / 1. նշանային, 2. պատկերային, 3. տեսարանային, 4. տեքստային/ և, ըստ այդմ էլ, պայմանավորում կնիքների հորինվածքային առանձնահատկութիւյունների աստիճանական զարգացման քառափուլ հաջորդակա-

նույն ժամանակ: Նշանային մակարդակն իր մեջ ներառում է միայն երկրաչափական /կետ, զիծ, կոր, շեղազիծ, զիգագ, խաչ, շրջան, ուղղանկյուն, շեղանկյուն, ցանց և այլն/ բնույթի պատկերներ ներկայացնող փորագրութիւններն ուղջ տիրույթը: Արանց տեղեկատվական հնարավորութիւնները բացառապէս սուբյեկտիվ-ենթադրական են և չեն պայմանավորում որևէ գործողութիւն կամ սյուզետ:

Պատկերային մակարդակն ամփոփում է՝ առանց որևէ ուղեկցող մանրամասնորի, միայն մեկ ստատիկ պատկեր ներկայացնող փորագրութիւնների տիրույթը / միջատ, սողուն, թռչուն, կենդանի, բույս, մարդ, երևակայական էակ և այլն/: Ի տարբերութիւն նախորդ մակարդակի, սրանց տեղեկատվութիւնը օբյեկտիվ է, թեև աշատեղ ևս բացակայում է գործողութիւն կամ սյուզետի պարագան:

Տեսարանային մակարդակն իրմեջ ընդգրկում է միմյանց հետ փոխադարձացված նշանային և պատկերային փորագրութիւնների ամենաբազմազան համադրութիւնների ուղջ տիրույթը: Արանց տեղեկատվական հնարավորութիւնները ներառում են փոխլրացնող օբյեկտիվ և սուբյեկտիվ ամենատարբեր ենթադրութիւնների դաշտը: Տեսարաններում հստակ ընդգծված է գործողութիւն /կամ գործողութիւնների/ և սյուզետի պարագան:

Տեքստային մակարդակն իր մեջ ներառում է արձանագիր տեքստերի /հիերոգլիֆ, սեպագիր, այբուբեն/ և նշանային, պատկերային ու տեսարանային փորագրութիւնների համադրութիւնն ուղջ տիրույթը: Արանց տեղեկատվութիւնն արդեն ոչ միայն օբյեկտիվ է, այլ նաև ստույգ: Այն ինքն իր մեջ տեքստի ձևով ամփոփում է կոնկրետ գործողութիւն, անձ, երևույթ կամ սյուզետ, ապա վերջինս համալրում նույն հորինվածքի նշանա-պատկերային հատվածում ներկայացված փորագրութիւնների ենթադրող /օբյեկտիվ և սուբյեկտիվ/ բովանդակութիւնը:

Այս տեղեկատվական հնարավորութիւնների վերոհիշյալ չորս մակարդակների հիման վրա էլ, մեր ուսումնասիրութիւնն մեջ առանձնացվել են կնիքների հորինվածքային առանձնահատկութիւնների աստիճանական զարգացումը մատնանշող չորս տարբերակներ, հետևյալ հաջորդականութիւնով:

- 1-ին տարբերակ.- երկրաչափական /նշանային/ հորինվածքներով կնիքներ,
 - 2-րդ տարբերակ.- Պատկերային հորինվածքներով կնիքներ,
 - 3-րդ տարբերակ.- Տեսարանային հորինվածքներով կնիքներ,
 - 4-րդ տարբերակ.- Արձանագիր տեքստ ունեցող հորինվածքներով կնիքներ:
- Վերոհիշյալ չորս ենթախմբերի և չորս տարբերակների տեղեկատվութիւնների հիման վրա էլ ատենախոսութիւնն մեջ քննարկվել են շին Արևելքի /Եգիպտոս, Հագյան աշխարհ, Փոքր Ասիա, Սիրիա-Պաղեստինյան աշխարհ, Միջագետք, Արաբական թերակղզի, Հայկական լեռնաշխարհ, Իրանական սարահարթ, Միջին Ասիա, Ինդոսի հովիտ/ մ.թ.ա. 7-1-ին հազ. կնիքների հանդես գալու, տարածման, փոխազդեցութիւնն և այլ հարցերը:

Գրոշմ - կնիքներ: Արանք ամենավաղ տարածում գտած կնիքներն են: Գործածման ժամանակաշրջանն ընդգրկում է մ.թ.ա. 7-1-ին հազարամյակները: Հորինվածքային առանձնահատկութիւնների առումով այս ենթախմբում ներկայացված են ըուր չորս տարբերակներն էլ: Ըստ որում, եթե առաջին երկրաչափական հորինվածքներով տարբերակը շին Արևելքում հիմնականում գոյութիւն ունի մ.թ.ա. 7-4-րդ հազ. ժամանակագրական սահմաններում և միայն էպիգրաֆի հանդիպում է մ.թ.ա. 2-1-ին հազ. հնագիտական համալիրներում /Փոքր Ասիա, Իրանական սարահարթ, Հայկական լեռնաշխարհ/, ապա երկրորդ պատկերային և երրորդ տեսարանային հորինվածքներով գրոշմ-կնիքները գրեթե միաժամանակ հանդես գալով մ.թ.ա. 5-4-րդ հազ. սահմանագծին, տարբեր ինտենսիվութիւնով /պատկերայինը՝ մ.թ.ա. 2-րդ հազ.-ից էպիգրաֆի, տեսարանայինը՝ անընդհատ/ շարունակում են իրենց գոյութիւնը մինչև մ.թ.ա. 1-ին հազ. կեսերը և վկայված են շին Արևելքի գրեթե բոլոր տարածաշրջաններում: Ինչ վերաբերում է գրոշմ-կնիքների չորրորդ արձանագիր տեքստերով տարբերակին, ապա վերջիններս հանդես են գալիս մ.թ.ա. 3-2-րդ հազ. սահմանագծից և եթե սկզբնապէս եգիպտոսի /Միջին թագավորութիւն/, Ինդոսի հովիտի /Հարապպա, Մոհենջո-Դարո, Հանգու-Դարո/ և Փոքր Ասիայի /Նոր Խեթական թագավորութիւն/ մենաշնորհն էին, ապա մ.թ.ա. 2-րդ հազ. կեսերից կիրառութիւն են գտնում Միջագետքում /Աշշուր, Բաբելոն/, իսկ մ.թ.ա. 1-ին հազ. 1-ին կեսին նաև Հայկական լեռնաշխարհի /Վանոսպի թագավորութիւն/ հնագիտական համալիրներում:

Գլանաձև կնիքներ: Կնիքների այս ենթախմբը թեև բանապայես ամենաներկայացուցչականն է, այսուհանդերձ տարբերակի մակարդակում ներկայացված է հորինվածքային առանձնահատկութիւնների 4 տարբերակներից 3-ով միայն /առկա նյութերում բացակայում է երկրորդ պատկերային տարբերակը/: Գլանաձև կնիքների և առաջին /երկրաչափական/, և երրորդ /տեսարանային/ տարբերակներն, ըստ էութիւն, հանդես են գալիս Միջագետքի /Քիշ, Ուրուկ, Ջամդեթ-Նասր, Նիպուր, Թելու, Նինվե/, Սիրիա-Պաղեստինյան աշխարհի /Թել Բրակ, Թել Լեյլան, Խաբուր, Ալալախ/ և Իրանական սարահարթի /Դուր-Ունիթաշ, Շոշ/ մ.թ.ա. 4-րդ հազ. կեսերի հնագիտական համալիրներում միաժամանակ և, եթե մ.թ.ա. 1-ին հազ. սկզբներից երկրաչափական տարբերակը դադարվում է կիրառվելուց, ապա տեսարանայինը՝ շարունակում է իր գոյութիւնը մինչև մ.թ.ա. 1-ին հազ. կեսերը: Նույն տարբերակների կնիքները մ.թ.ա. 3-2-րդ հազ. 2-րդ կեսից հանդես են գալիս և մ.թ.ա. 2-րդ հազ. տարածվում Փոքր Ասիայի /Չաթալ-հույուկ, Արսլան-թեփե, Տրոյա, Ջին-Ջիրի, Քյուլ-թեփե, Ալեմհույուկ, Արախույուկ, Իզմիր, Տարսուս/, Հագյան աշխարհի /Թոդոս, Գիլիլի-թաշ, Կոնոսոս, Լալիսոս, Պերատի, Ջիգուրիես, Լեռնա/, Ինդոսի հովիտի /Վալիբրանգան, Մոհենջո-Դարո, Հարապպա/ և Հայկական լեռնաշխարհի /Օզնի, Թուրք, Քարաշամբ, Լժաշեն, Արթիկ, Ատ-

ջածոր, Խաչենազետ, Շամիրամ, Հրազդան, Վան, Էրեբունի, Արմավիր և այլն/ հնագիտական հուշարձաններում: Ինչ վերաբերում է գլանաձև կնիքների չորրորդ՝ արձանագիր տեքստերով տարբերակին, ապա վերջիններս հայտնվում են մ.թ.ա. 3-րդ հազ. 2-րդ քառորդից: Ամենավաղ օրինակները վկայված են Միջագետքի /ՈՒր, Թելլո, Լագաշ, Թել-Փարա/, Սիրիա-Պաղեստինյան աշխարհի /Մարի, Բեյ Իմախ, Մերսիմ, Մինեթ-էլ-Բեյդա/ և Եգիպտոսի /Թեբե, էլ-Քաբ, Նագա-էդ-Դեր, Թել-Ամարնա/ հնագիտական համալիրներում:

Մ.թ.ա. 2-րդ հազ. կեսերից նոր Խեթական թագավորության, Կասսիտական Բաբելոնի, Միտաննիի և Եգիպտոսի նոր թագավորության կազմավորման հետ, արձանագիր տեքստերով գլանաձև կնիքների ինքնատիպ օրինակները տարածում են ստանում ողջ Մերձավոր Արևելքում: Հայկական լեռնաշխարհում նրանք ի հայտ են գալիս մ.թ.ա. 2-րդ հազ. կեսերից: Վերջիններս միջագետքյան և եգիպտական պատկանելություն ունեն: Արձանագիր տեքստերով գլանաձև կրնիքների տեղական օրինակները բացառապես վերաբերում են վանտոսի /ՈՒրարտու/ թագավորության ժամանակներին և հայտնաբերվել են վանի և Կարմիր Բլուրի /Թեյշեբահի/ պեղումներից: Իրենց ամենաուշ կիրառությունն արձանագիր գլանաձև կնիքները գտան Իրանի Աքեմենյան կայսրության ժամանակներում: Վերջինիս անկումից հետո, քննարկվող տարբերակի գլանաձև կնիքների կիրառությունը շին Արևելքում, ըստ էություն, դադարեց:

Կրնաձև կնիքներ: Կնիքների այս ենթախումբը մեծաթիվ չէ և, որպես ինքնուրույն ստորաբաժանում կնքագիտության մեջ առանձնացվում է առաջին անգամ: Նրա առաջին /երկրաչափական/ և երկրորդ /պատկերային/ տարբերակներին պատկանող վաղագույն և եզակի օրինակները, որ վերաբերում են մ.թ.ա. 4-րդ հազ. վերջին և 3-րդ հազ. 1-ին կեսին, հայտնաբերվել են Միջագետքի /ՈՒր/, Եգիպտոսի /պատահական/ և Էգեյան աշխարհի /Ամորգոս/ հնագիտական համալիրներից: Մ.թ.ա. 3-րդ հազ. վերջում և մ.թ.ա. 2-րդ հազ. 1-ին կեսին նույն տարբերակներին վերաբերող օրինակներ հանդես են գալիս Հայկական լեռնաշխարհի /Թոնդր, Սաղուգա, Զուրտաքեթի/ և Փոքր Ասիայի /Այդին/ հուշարձաններում: Կրնաձև կնիքների երրորդ՝ տեսարանային հորինվածքներով տարբերակը տարածում է ստանում մ.թ.ա. 2-րդ հազ. 1-ին քառորդից: Ամենավաղ օրինակը հայտնաբերվել է Փոքր Ասիայում /Ջյուլ թեփե-Վանի/ : Մ.թ.ա. 2-1-ին հազ. սահմանագծում նույն տարբերակին պատկանող եզակի օրինակներ վկայված են նաև Միջին Ասիայի /Բակտրիա, Մարգիանա/ և Ինդոսի հովտի /Ակրա/ հնավայրերում: Կրնաձև կնիքների երրորդ տարբերակին պատկանող օրինակները հատկապես լայն տարածում ստացան Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. 1-ին հազ. 2-րդ քառորդին և բացառապես կապված են վանտոսի թագավորության /վան, Էրեբունի, Արգիշթիլիսի, Թեյշեբահի, Արտաշատ, Նորատուս, Բաստամ, Մծբին-Նամիշլի/ ժամանակաշրջանի հետ: Այս առումով առավել հետաքրքիր են կրնաձև կնիքների չորրորդ՝

արձանագիր տեքստերով տարբերակի նմուշները: Սրանք ևս, առ այսօր հայտնի են միայն Հայկական լեռնաշխարհից և դարձյալ առնչվում են վանտոսի թագավորության հնագիտական հուշարձանների հետ /Թեյշեբահի, Բաստամ/:

Պրիզմայաձև կնիքներ: Այս ենթախումբը ևս մեծաթիվ չէ և, որպես ինքնուրույն ստորաբաժանում, դարձյալ առանձնացվում է առաջին անգամ: Առաջին և երկրորդ տարբերակներին պատկանող եզակի նմուշները մասնագետների կողմից թվագրվում են մ.թ.ա. 4-3-րդ հազ. սահմանագծով: Հայտնաբերվել են Միջագետքից /ՈՒրուկ/, Կրետեից/Նեսալոլիս/ և Իրանական սարահարթից /Զագրոս/: Համեմատաբար ավելի լայն տարածում քննարկվող տարբերակների պրիզմայաձև կնիքները ստանում են մ.թ.ա. 2-րդ հազ. 2-րդ քառորդից և հայտնի են Սիրիա-Պաղեստինյան աշխարհի /Կամիշլի/ և Հայկական լեռնաշխարհի /Արթիկ, Լոռի բերդ, Շիրակավան, Ն.Գետաշեն, Նորատուս, Մոթբի ծոր/ հնագիտական համալիրներից: Համեմատաբար ուշ /մ.թ.ա. 1-ին հազ. 1-ին կես/ թվագրվող օրինակները դարձյալ Հայկական լեռնաշխարհից են /Կարմիր Բլուր, Նորատուս, նոր Բայազետ-Նամո/ և վերաբերում են վանտոսի թագավորության ժամանակներին: Ավելի ուշ վկայված չեն: Կրնաձև կնիքների երրորդ՝ տեսարանային հորինվածքով տարբերակին պատկանող ամենավաղ նմուշը հայտնի է Եգիպտոսից և վերաբերում է 13-րդ հարստության ժամանակներին /մ.թ.ա. 13-րդ դար/: Մ.թ.ա. 2-րդ հազ. 2-րդ քառորդին վերաբերող նման կնիք հայտնաբերվել է Փոքր Ասիայում /Տարսոն/: Վերջին տարածաշրջանն, ուր հանդիպում են քննարկվող տարբերակին վերաբերող նմուշներ՝ Հայկական լեռնաշխարհն է /Էրեբունի, Արգիշթիլիսի, Թեյշեբահի/: Սրանք ևս վերաբերում են վանտոսի թագավորության ժամանակներին և ավելի ուշ վկայված չեն: Ինչ վերաբերում է պրիզմայաձև կնիքների չորրորդ՝ արձանագիր տեքստերով տարբերակին, ապա առ այսօր մեզ հայտնի է դրանց միայն երկու օրինակ: Մեկը հայտնաբերվել է շյուսիսային Սիրիայի Կամիշլի /Մծբին/ քաղաքից, ասուրական կնքագործության նմուշ է և վերաբերում է մ.թ.ա. 1-ին հազ. 1-ին քառորդին: Երկրորդը՝ պատահական գտածո է Հայկական լեռնաշխարհից /Եղեգնաձորի մերձակայքից/: Քառակող իրան ունեցող այս պրիզմայաձև կնիքի նիստերին մեջ ընդ մեջ արված պատկերների ու սեպանշանների վերականգնումն ու վերծանումը, մեզ հնարավորություն է տվել կնիքի իրանին կարդալ , ar + dno + ti , , , ar + giš + ti , , , Արգիշթի , անունը: Մերձավոր Արևելքի մյուս տարածաշրջաններում այս տարբերակին պատկանող պրիզմայաձև կնիքներ առայժմ հայտնաբերված չեն:

Կնիքների չորս ենթախմբերի վերոհիշյալ դիտարկումները թույլ են տալիս հստակեցնել կնքագործական հնարքների ընտրություն և հորինվածքների կառուցման այն առանձնահատկությունները, որ ի հայտ եկան շին Արևելքի կոնկրետ տարածաշրջաններում և քաղաքական կազմավորումներում քննարկ-

վող ժամանակաշրջանում:

Շուկերա-ակադեմիան և Ռիբի 3-րդ հարստութեան կնքագործութեան մեջ այդ ինքնատիպութեամբ յուսնն արտահայտվում էր կնիքների մակերեսներին փորագրված տեսարաններում մարդկանց դեմքերը դիմացից /Ֆաս/ անշարժ, իսկ մարմինները դեմքի համեմատ որոշ անկյան տակ թեքված դիրքով՝ շարժման մեջ, պատկերելիս: Տեսարանները երբեմն աջ կամ ձախ կողմից երիզվում էին նաև ուղղահայաց ընթացիկ սեպագիր տեքստով: Կնիքները գերազանցապես գլանաձև էին, պատրաստված՝ կրաքարից, օճառքարից, օճաքարից և լազուրիտից:

Մ.թ.ա. 3-1-ին հազ. եգիպտական կնքագործութեան համար, ի տարբերություն շին Արևելքի մյուս հատվածների, բնորոշ էր դրոշմ-կնիքների /կոյաբզզ-սկարաբեյներ/ օգտագործումը: Ինքնատիպ կառուցվածքից զատ նրանց հատուկ էր մի յուրօրինակ հնարանք ևս: Դա ձվաձև շրջանակով սահմանազատված հիերոգլիֆ տեքստի տեղադրումն էր կոյաբզզի դրոշմով մակերեսին փորագրված տեսարանի կենտրոնում: Կնիքների պատրաստման համար օգտագործվում էին փղոսկրը, կվարցը, օճաքարը, հասպիսը, օճառքարը: Վերջիններս երբեմն ծածկվում էին դեղին, կանաչ և փիրուզագույն շնարակով:

Մ.թ.ա. 2-րդ հազ. Նոր Խեթական թագավորութեան տիրակալները նախընտրեցին առավելապես հեմատիտից և գեոտիտից պատրաստված, շրջանաձև կամ ուղղանկյուն դրոշմով մակերեսով և կշռաքարաձև իրանով դրոշմ-կնիքների կիրառումը: Սրանց վրա, ի տարբերություն եգիպտական կոյաբզզների, արձանագիր տեքստը տեղադրվում էր ոչ թե տեսարանի կենտրոնում, այլ երկու կամ երեք սեպագիր գոտիներով բոլորում էր այն:

Մ.թ.ա. 2-րդ հազ. 2-րդ քառորդում պատմական թատերաբեմ իջած Կասսիտական Բաբելոնը շարունակելով Հարավային Միջագետքի մ.թ.ա. 3-րդ հազ. կնքագործական ավանդույթներն, այն համալրեց Նոր հնարանքով: Պահպանելով տեսարանի աջ և ձախ կողմում՝ ուղղանկյուն շրջանակի մեջ ուղղահայաց գետեղված տեքստի սկզբունքը, կասսիտները տեսարանի վերևում /նրան գուգահե/ ավելացրին սեպագիր հորիզոնական տող: Ստացվեց ,,կամարաձև,, դասավորված և աջ ու ձախ կողմերում կրկնվող քովանդակով յամբ արձանագրութեան, որի կենտրոնում տեսարանն էր: Այստեղ կնիքների արտադրութեան համար օգտագործվում էր լազուրիտը, քաղբեղոնիտը, հասպիսը, գալթը:

Մ.թ.ա. 2-րդ հազ. 2-րդ քառորդին կազմավորված Խուրի-Միտաննի պետությունները ևս իր նորամուծությունները ներդրեց հինարևելյան կնքագործութեան մեջ: Դա գլանաձև կնիքների վրա փորագրված տեսարաններում կերպարների քանակի ընդգծված համաչափութեան հաստատումն էր և որը տեսարանի քառանկյունում աջ և ձախ հավասարաչափ մասերի: Դրանցից մեկը հիմնականում պատկերում էր դեմ հանդիման կանգնած անձանց և, ըստ ամենայնի, խորհրդ-

դանշում մարդկանց աշխարհը /քառյակ/, իսկ երկրորդը՝ համախորհրդանկան գծով կամ նախազոտով բաժանվում էր երկու հավասար հատվածների և վերին ու ստորին կեսերում պահպանելով համաչափութեան սկզբունքը, հավանաբար ներկայացնում՝ կանոնակարգված կոմիսիոն ու խոտնոսը: Կնիքների արտադրութեան համար օգտագործվում էին հեմատիտը, հասպիսը, լեոնային բյուրեղը, օճառքարը, օճաքարը և կրաքարը:

Մ.թ.ա. 13-րդ դարից կազմավորված Միջին Ասուրական, իսկ մ.թ.ա. 1-ին հազ. սկզբներից՝ Նոր Ասուրական թագավորութեանները նույնպես իրենց ,,ուղղումները,, մտքին հինարևելյան կնքագործութեան մեջ: Գլանաձև կնիքների փորագիր տեսարաններում գերակշռող դարձնելով առասպելա-դիցաբանական սյուժեի և խախտելով սեպագրի տեղադրման կանոնիկ /տեսարանից դուրս/ սկզբունքն, ասուրացիներն այն գետեղեցին տեսարանի մեջ ամենատարբեր դիրքերով: Կնիքներն այստեղ պատրաստվում էին ազաթից, դիրիտից, քաղբեղոնիտից, գազաթից /գիշեր քար/:

Կազմավորվելով արդեն մ.թ.ա. 2-րդ հազ. վերջին քառորդում և որպես ինքնուրույն ու անկախ պետական միավոր հանդես գալով մ.թ.ա. 9-րդ դարի կեսերից, վանտոսպի տիրակալները մեծ ընտրություն ունեին սեփական կնքագործութեան զարգացման համար: Օգտվելով հինարևելյան կնքագործութեան բազմադարյան ավանդույթներից և, միևնույն ժամանակ փորձելով դըրսևորել սեփական ինքնատիպութեանը, վանտոսպիները հմտորեն օգտագործեցին մ.թ.ա. 3-2-րդ հազ. սահմանագծից Միջագետքում, Հայկական լեռնաշխարհում և Փոքր Ասիայում հայտնի /ու խիստ սահմանափակ տարածում ունեցող/ կոնաձև կնիքների արտաքինը, միտաննիական օրինակների՝ տեսարանի կառուցման համաչափութեան սկզբունքը և կասսիտներից ասուրացիներին անցած՝ տեսարանի վերևում հորիզոնական դիրքով տեղադրվող արձանագիր տեքստի հնարանքը և ստեղծեցին սեփական օրինակները, որոնք ի տարբերություն շին վերը նկարագրված նախատիպերի, արձանագիր հորիզոնական տեքստ պարունակում էին նաև տեսարանի ստորին մասում: Հորինվածքի կառուցման եղանակ, որ վանտոսպի թագավորութեան կնքագործների նորամուծությունն էր շին Արևելքի կնքագործութեան մեջ: Կնիքները հիմնականում պատրաստվում էին գազաթից /գիշեր քար/, հազվադեպ քաղբեղոնիտից, օճառքարից և հեմատիտից:

Շին Արևելքի մյուս տարածաշրջաններում /էգեյան աշխարհ, Արաքսական թերակղզի, Պարսից ծոց, Միջին Ասիա/ կնքագործությունները հիմնականում զարգանում էր վերը նշված քաղաքակրթությունների և հատկապես Միջագետքի ու Սիրիա-Պաղեստինյան աշխարհի անմիջական ազդեցությունների տակ, հանգամանք, որ մեկ անգամ ևս մատնանշում է վերջիններիս առանձնակի դերը կնքագործութեան զարգացման գործում:

Գլուխ Երկրորդ: Կնիքները որպես առօրյա գործածութեան առարկա-

ներ, իշխանութեան և պաշտամուտների խորհրդանշաններ: Հնագիտական հետազոտութեան յուշերի արդյունքներն, ինչպես նաև հինարևելյան գրավոր սկզբնաղբյուրների տվյալները թույլ են տալիս եզրակացութեան հասարակական կյանքում կնիքների ունեցած բազմաբնույթ կիրառութեան վերաբերյալ:

Անքաղաքացիական ժողովրդական մասնագիտութեան: Սոցիալ-տնտեսական հարաբերութեան նշանակալի դեր ստանձնած այս առարկաների պատրաստման հնարքների կատարելագործումն ու արտադրական եղանակների մշակումը, զբաղմունքի այս տեսակն աստիճանաբար վերածեցին որոշակի գիտելիքներ և հմտութեան պահանջող, համարվաբեր ու շահեկան մասնագիտութեան: Կնքագործութեամբ զբաղվող մարդկանց շուկայական տեսքերն անվանում էին *„կնք“*, *„կնք“*, *„կնք“* ակադեմիականները *„կնք“*, *„կնք“*, *„կնք“* ժամանակի ընթացքում մշակվեցին նաև որակյալ կնքագործին ներկայացվող մասնագիտական պահանջները: Ըստ դրանց, սկսնակն առնվազը չորս տարի պարտավոր էր աշակերտել փորձված կնքագործի մոտ, լավ ծանոթանալ տարբեր քարտեսակների առանձնահատկութեաններին և յուրացնել կնքագործութեան նրբութեանները: Գրանից հետո միայն նա կարող էր սեփական արհեստանոց բացել և աշակերտ ունենալ:

Կնիքների գործածման տնտեսական քննադատությունը: Մասնագետների կարծիքով /Մ. Էքերտ, Բ. Գոֆֆ, Բ. Բրենտյես/ կնիքների վաղագույն օրինակները հնարավոր է օգտագործված լինեն որպես գործվածքեղենը դաջելու և մարդու մարմինը վիտելու հարմարանքներ: Աստիճանաբար ավելի ու ավելի լայն կիրառութեան գտնելով տնտեսութեան մի շարք քննադատներում, կնիքների որոշ օրինակներ սկսվեցին օգտագործվել խեցանոթների իրանները դաջագործելու գործում: Ընդունելութեան են գտել վերջիններս նաև բուն կնքագործութեան մեջ: Պահպանված հնագիտական նյութերը վկայում են, որ քարից պատրաստված գլանաձև կնիքները կիրառվել են նաև կավից, մածուկից կամ հանքախեցից պատրաստված գլանաձև կնիք-կիսապատրաստուկների հարթ մակերեսները պատկերագործելու համար: Կնիքների կիրառման մի հետաքրքիր քննադատի մասին էլ նշում է Գ. Կոլոնը: Ըստ նրա, ուղղանկյուն, ոչ մեծ կավե տախտակների վրա գլանաձև կնիքներով արված դաջվածքները, հավանաբար, ժամանակին ծառայել են որպես անձը հաստատող վկայական կամ *„այցետոմս“*:

Կնիքների կրելու օրինակները: Կնիքների ունեցած բազմաբնույթ կիրառութեան վերաբերյալ պայմանավորում էին նաև կրելու օրինակների հետ կապված նորմերի մշակումը: Այս առումով հինարևելյան մի շարք որմանակարներ ու բարձրաբան-դակներ ներկայացնում են կնիքները կրելու տարբեր եղանակներ. պարանոցին, գլխին /վարսերի հյուսքի մեջ/, կրծքին, գոտուց իջնող ուղորդու-

ղի վրա, դաստակին, մատներին և այլն: Այս տվյալները հաստատում են նաև Հին Արևելքի հնագիտական հուշարձանների պեղումները:

Կնիքները որպես տոնա-ծիսական առարկաներ: Կնիքներին վերագրվել են նաև գերբնական, պահանջի և ամոքիչ հատկութեաններ: Այդ են վկայում նյութական մշակույթի մի խումբ գոթոններ և արձանագիր տեսքեր: Ըստ վերջիններիս, մ.թ.ա. 3-րդ հազ. 1-ին կեսին, մարդուն չար լեզուներից ու զրպարտութեանից զերծ պահելու նպատակով, կավից արհեստական լեզու էին պատրաստում, այն դաջում չարխափան հատկութեաններ ունեցող կնիքով, այնուհետև դաջագործ լեզվակը տեղադրում փոքրիկ մեղուկի մեջ և նետում գետը, հավատալով, որ դրանով վանում են զրպարտութեանը: Այսպես նաև լեզվակներ հայտնաբերվել են Ռիդից /մ.թ.ա. 3-րդ հազ. 2-րդ կես/ և Ալալաից /մ.թ.ա. 2-րդ հազ. 2-րդ կես/: Գլանաձև կնիքների որոշ արձանագիր օրինակներ էլ իրենց տեսքերում հիշատակում էին հինարևելյան խոշոր աստվածների անունները /Աշուր, Մարդուկ, Ադադ, ներգալ, Հայա-Էա-Էնկի, Բազմաշուր և այլն/ և համարվում նրանց աստվածային կամքի ու հրամանի հաստատողները: Պահվում էին խոշոր տաճարական համալիրներում և օգտագործվում տոնա-ծիսական բացառիկ հանդիսութեանների ժամանակ /ալբալի թագադրութեան, նոր տարվա հանդիսութեաններ, հաղթութեան տոն և այլն/: Կնիքներին չարխափան և ամոքիչ հատկութեաններ էին շնորհում նաև այն քարտեսակները, որոնցից պատրաստվում էին վերջիններս: Ըստ հնուց պահպանված բանավոր գրույցների, արձանագիր և գրավոր տեսքերի, սարդիոն, օրինակ, կտրում էր ներքին և արտաքին արյունահոսութեանը, փարառում էր չար մտքերը և օգնում հղի կանանց ծննդաբերութեան ժամանակ: Ազաթը պահպանում էր բորոտութեանից ու բուսից, օձի ու կարիճի խայթոցներից և մարդուն պերժախոսութեան ու իմաստութեան էր շնորհում: Զմրուխտը կուրացնում էր օձերին ու վիշապներին, պաշտպանում ամեն տեսակ թույնից, հնարավորութեան ընձեռում կանխագուշակելու ապագան: Տոպազն ու նեֆրիտը վանում էին երկամային ցավերը: Շափուղան վերացնում էր ավելորդ մսային աճուկները, ամրացնում սիրտն ու տեսողութեանը: Մեղեսիկը կտրում էր ծարավը, բացում ակործանը: Լազուրիտը հանում էր մեջքի ցավը, իսկ կոնյակի բյուրեղը բուժում էր ատամները: Մ.թ.ա. 6-րդ դարի Բաբելոնի տիրակալ նաբոնիդի տեսքերից մեկը նշում էր, որ *„... թանկարժեք հասկից պատրաստված կնիք“* արքայական քար է *„...“*: Ըստ հինարևելյան արձանագիր երագհանների՝ երագում կարմիր քարից կնիք տեսնելը խորհրդանշում էր զավակի ծնունդ, իսկ կնիքի կորուստը՝ երեխայի մահ: Կնիքներին ու դրոշմներին վերագրվող ծիսական հատկութեանները Հին Արևելքում պահպանվեցին քրիստոնեութեան և մահմեդականության ընդունումից հետո ևս:

կնիքները օրացն սոցիալական կարգավիճակի խորհրդանշանները: Հնագիտական հետազոտությունների արդյունքներն ու գրավոր սկզբնաղբյուրների հարգողումները հիմք են տալիս ենթադրելու, որ ժամանակի ընթացքում կնիքները վերածվել են խորհրդանշանների, որոնցով է նեոլիթյան վաղերկրագործական քնակատեղիներում մտանշնել են դրանց կրողների սեռա-տարիքային առանձնահատկությունները, զբաղմունքն ու համայնքի ներսում զբաղեցրած դիրքն, իսկ Բրոնզի դարաշրջանից սկսած՝ միայն սոցիալական կարգավիճակը /առանձն սեռա-տարիքային սահմանափակման/: Իզուր չէ, որ է նեոլիթյան և երբեմն նաև վաղբրոնզեդարյան /վաղ փուլի/ դամբարաններում պեղված կնիքների գերակշիռ մասը՝ կանանց թաղումներից են: Վաղերկրագործական միջուր քնակատեղիների /Չաթալ-հույուկ, Թեփե Գավրա, Թեկ Բրակ, Նեա-նիկոմեդիա, Աուկուտեհի, Տրիպոլյե, Ուստուպո, Ստարչևո, Նյուրյոշ և այլն/ սրբարաններում կանանց արձանիկների հետ կնիք-դրոշմների հայտնաբերումը, թույլ է տալիս այստեղ ևս հավանական համարել կանանց /և հատկապես հասուն տարիքի կանանց/ հետ վերջիններիս կապը:

Հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, նախնադարյան կարգերի քայքայման պայմաններում, կնիքների հանդեպ կանանց ունեցած գերակայությունը հետզհետե սկսեց տեղի տալ և նրանք, տվյալ համայնքի կոնքը պատկանող հմայիլ-խորհրդանշաններից, աստիճանաբար վերածվեցին տոհմի, ընտանիքի և անգամ առանձին անհատի անձնական սեփականությունն ու իրավունքը խորհրդանշող առարկաների: Հանգամանք, որ մի կողմ մղելով սեռա-տարիքային սահմանափակումներն, այս դեպքում որոշակորեն ընդգծում էր տվյալ հասարակության սոցիալական սահմանափակում անհատի կամ մարդկանց առանձին խմբերի ունեցած կարգավիճակը: Այս տեսակետից, ուշագրավ տեղեկատվություն են պարունակում Հայկական լեոնաշխարհի բրոնզեդարյան /Լժաշեն, Արթիկ, Ներքին Գետաշեն, Նորատուս, Մոթքի ժող/ և երկաթեդարյան /Էրբերունի, Արգիշթիիսիլի, Նորատուս, Բաստամ և այլն/ դամբարանային համալիրները: Ափսոսանքով պետք է արձանագրել, որ համարողաբանական նյութի պահպանման, արժեքավորման և տեղեկատվական բացառիկ հնարավորությունների անտեսման հետևանքով, սեռա-տարիքային և էթնո-սոցիալական հետազոտությունների իրականացման հնարավորություններից զրկվել են Մերձավոր Արևելքի /այդ թվում նաև Հայկական լեոնաշխարհի ու Անդրկովկասի/ հնագիտական հուշարձանների զգալի մասը: Ահա թե ինչու, կնիքներ պարունակող Լժաշենի, Ն.Գետաշենի, Նորատուսի և Մոթքի ժողի դամբարանների հրամարդաբանական նյութերն իրենց սեռա-տարիքային տվյալների հավաստիությունը, ինչպես նաև մարդաբանական տիպերի հետազոտման տեղեկատվական հնարավորություններով, այսօր էտալոնային հուշարձանի կարգավիճակ են ձեռք բերում և կարևոր նշանակություն ունեն Մերձավոր Արևելքի էթնո-սոցիալական գործընթացների ուսումնասիրման և մեկնաբանման համար:

Վերջաբան: Հին Արևելքի /այդ թվում նաև Հայկական լեոնաշխարհի/ մ.թ.ա. 7-1-ին հազ. կնիքների նորովի դասակարգումն ու վերջինիս հենքի վրա տարածաշրջանի կնքագործությունների զարգացման պատմա-ժամանակագրական համայնապատկերի վերականգնումը, մեր կարծիքով հնարավորություն է ընձեռում արժարձելու մի կարևոր հիմնահարցի ևս: Այն առնչվում է Հին Արևելքի կոնկրետ շրջաններին և ուզված-պետական կազմավորումներին քննորոշ կնիքների, այլ պատմա-մշակութային միջավայրերում հայտնվելու Ֆեոնոմենի վերհանման և վերջինս պայմանավորող բազմաթույն գործոնների մեկնաբանման խնդիրների հետ: Այս առումով Հայկական լեոնաշխարհից հայտնաբերված եզրիտական /Մեծամոր/, միտանիական /Լժաշեն, Արթիկ, Մեծամոր, Լոռի բերդ, Շամիրամ, Հրազդան, Շահթախի, Առաջածոր/, կասսիտական /Մեծամոր/ և ասսուրական /Խոջալու/ կնիքներն ու դրոշմները, որպես պետական իշխանություն և իրավա-դիվանագիտական հարաբերությունների վավերացման խորհրդանշաններ, ձեռք են բերում առանձնահատուկ արժեք տեղեկատվական դաշտ ստեղծելով պատմա-քաղաքական հավանական վերակազմությունների համար:

Այն հայտ է, որ մ.թ.ա. 17-15-րդ դարերում Մերձավոր Արևելքում ձևավորված հզոր պետությունների /և հատկապես Խեթական թագավորության ու Եգիպտոսի/ աշխարհա-քաղաքական շահերի բախումը, թելադրում էր հակադիր ուզված-քաղաքական խմբավորումների ստեղծման անհրաժեշտություն: Ռազմա-քաղաքական և դիվանագիտական բարդ հարաբերությունների այս հենքի վրա միանգամայն բացատրելի են Եգիպտոսի փարավոն Թուրմոս 3-րդի /մ.թ.ա. 16-րդ դարի վերջ - մ.թ.ա. 15-րդ դարի 1-ին քառորդ/, կասսիտական տիրակալներ Ռիլամ-Բուրբարիաշի՝ Բուրնա-Բուրբարիաշի որդու /մ.թ.ա. 15-րդ դարի կեսեր/ և Աուրիգալուի /մ.թ.ա. 15-րդ դարի վերջ - մ.թ.ա. 14-րդ դարի 1-ին կես/ կնիքների և իշխանական խորհրդանշանների հանդես գալը Հայկական լեոնաշխարհի հնագիտական համալիրներում: Սա մի կողմից մատնանշում է մետաղագործական ավանդույթներով հայտնի Հայկական լեոնաշխարհի կարևոր դերն այդ քաղաքական գործընթացներում, մյուս կողմից՝ մի անգամ ևս անուղղակի կերպով հուշում է քննարկվող ժամանակահատվածում /մ.թ.ա. 15-13-րդ դդ/ այստեղ արդեն ձևավորված վաղ պետական կազմավորումների /Հայաստ-Ածծի, Ալզի, Նաիրի, Շուբրիա, էթիուսի/ գոյությունը փաստը: Այսպիսով, կնիքների տեղեկատվության հիմքի վրա տարածաշրջանի մ.թ.ա. 2-րդ հազ. կեսի ուզված-քաղաքական իրավիճակի վերակազմությունը, թույլ է տալիս ենթադրել Մերձավոր Արևելքի որոշ տարածաշրջանների /այդ թվում նաև Հայկական լեոնաշխարհի/ համար կապերի ու փոխառնությունների արևմտյան /նաև հարավ-արևմտյան/ ուղղություն կարևորությունն ու առաջնությունը:

Մերձավոր Արևելքում և Միջերկրականի ավազանում մ.թ.ա. 2-րդ հազ. 2-րդ քառորդում ձևավորված հասարակական-քաղաքական և էթնո-մշակութային-

յին հարաբերութիւնները լավ մշակված համակարգն, ինչպես վկայում են զրավոր սկզբնաղբ յուրներն ու ծավալուն հնագիտական պեղումների արդ- յունքներն, անսպասելի խաթարվեց մ.թ.ա. 18-12-րդ դարերի սահմանագծին, հիմք հանդիսանալով միջցեղային բախումների, ինչպես նաև էթնիկական լուրջ և լայնամասշտաբ տեղաշարժերի համար: Վերջիններս մ.թ.ա. 12-րդ դարի 1-ին քառորդում հանգեցրին սոցիալ-տնտեսական, էթնո-մշակութային և ռազմա-քաղաքական հին համակարգի փլուզմանը, որի հետևանքով փաստ- րեն փակվեցին առևտրի վաղեմի ճանապարհներն ու դադարեցին գործել մշա- կութային կապերի ավանդական ուղիները: Տարածաշրջանում սկիզբ առած էթ- նո-քաղաքական խորն ու արմատական փոփոխութիւնները հիմք հանդիսացան քաղաքական նոր ուժերի և խմբավորումների ձևավորման համար, որոնցում թելադրող դիրք ստանձնեց Ասսուրական պետութիւնը: Տեղի ունեցող փո- փոխութիւններն իրենց ուղորտն առան նաև Հայկական լեռնաշխարհը: Նկատի ունենալով տարածաշրջանում ստեղծված քաղաքական իրավիճակը, կարելի է պնդել, որ Հայկական լեռնաշխարհի համար մ.թ.ա. 12-րդ դարից առանձնա- կի նշանակութիւն ունեցող է ձեռք բերել կապերի ու փոխառնչութիւնների հարավ-արևելյան /արևմտաիրանական/ ուղին: Տվյալ պահին այն հեռու էր ընկած արևմուտքում տեղի ունեցող իտեանսիվ տեղաշարժերից և ինչ-որ չա- փով ապահով էր ասսուրացիների ոտնձգութիւններից: Առևտրա-մշակութային այս նոր ուղու հաստատմից հետո, թերևս մ.թ.ա. 12-11-րդ դարերից Հայ- կական լեռնաշխարհի ցեղախմբերի և վաղ պետական կազմավորումների համար սկսվեց հարաբերական կայունութիւն մի ժամանակահատված: Ջարգացման ու առաջընթացի այս ընդհանուր պատկերը, թերևս դեպքից-դեպք միայն, ընդմիջ- վել է ասսուրական ռազմաճակատների ոչ տևական ներխուժումներով /մասնա- վորապես այդ է վկայում Արցախից հայտնաբերված Աղաղ-նիրարի 2-րդի ար- ծանագիր ազաթե կնիքը/, որոնք ոչ այնքան խոչընդոտել, որքան ինչ-որ տեղ նաև պատճառ են հանդիսացել լեռնաշխարհի ցեղախմբերի ու վաղ պետական կազմավորումների ռազմա-քաղաքական շահերի մերձեցմանը, հիմքեր ստեղծե- լով այնպիսի հզոր և մարտունակ պետութիւն կազմավորման համար, ինչպիսին մ.թ.ա. 9-րդ դարից դարձավ Վանտոսպի /Ոիրարտու/ թագավորութիւնը:

Ամփոփելով հինարևելյան կնիքներին վերաբերող դիտարկումներն ու դատո- ղութիւնները կարելի է արձանագրել, որ կնիքները կիրառական ամենա- տարբեր եղանակներ և դրանցից բխող ինքնատիպ կառուցվածքային դրսևորում- ներ ունեցող առարկաներ են, որոնք օգտագործվել են տարբեր բնույթ և նը- շանակութիւն ունեցող իրերի մակերեսներին դրոշմման միջոցով արտասուլու- թիւններ առաջացնելու համար և, դրանով իսկ, կոնկրետ իրավիճակներում /տնտեսական, սոցիալական, ծիսական, էթնիկական, քաղաքական և այլն/ հաս- տատել ու վավերացրել անձնական սեփականութիւն, պատկանելութիւն, իրա-

վունք և իշխանութիւն խորհրդանշող իրողութիւնները:

Ձևավորվելով Սիրիա-Պաղեստինյան աշխարհի և Միջագետքի էսեռլիթյան վաղերկրագործական բնակատեղիներում, նրանք աստիճանաբար տարածվել են Հին Աշխարհի զրեթե բոլոր տարածաշրջաններում, ներթափանցել հասարակա- կան կյանքի և տնտեսութիւնի ամենաբազմազան ուղորտները և, որպես մարդու գործունեութիւն հետ անմիջականորեն առնչվող անհրաժեշտ միջոցներ, ի- րենց դերն ու նշանակութիւնը պահպանել մինչև մեր օրերը:

ԱՏԵՆԱՍՈՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄՅԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱՆՈՒՄՆԵՐԸ

1. Պեղումներ Ամոնի շրջանի Սարուխան գյուղում /,,Հայկ. ՍՍՀ-ում 1983-1984թթ դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան: Ջեկ.թեգ. ,,/,, Երևան 1985, էջ 22-24:
2. Պեղումներ Սևանի կոնկրետի տարածքում 1988թ /,,Հայկ. ՍՍՀ-ում 1987-1988թթ դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան: Ջեկ.թեգ. ,,/,, Երևան 1989, էջ 25-27:
3. Պեղումներ Սևանի կոնկրետի նորատուսի հատվածում /,,ՀՀ-ում 1989-1990թթ դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիր- ված գիտական նստաշրջան: Ջեկ.թեգ. ,,/,, Երևան 1991, էջ 29-31:
4. Հետախուզական պեղումներ ,,Մոթի ժոր,, դամբարանադաշտում /,,ՀՀ- ում 1989-1990թթ դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքնե- րին ... ,,/,, Երևան 1991, էջ 81-83:
5. Պեղումներ ներքին Գետաշեն գյուղում /,,ՀՀ-ում 1989-1990թթ դաշտա- յին ... ,,/,, Երևան 1991, էջ 33-35: /Վ. Է. Հովհաննիսյանի հետ համատեղ/
6. Արթիկի թիվ 107 դամբարանից հայտնաբերված սակրը և նրա հինարևել- յան զուգահեռները /,,Շիրակի պատմա-մշակութային ժառանգութիւնը: Հանրապետական 1-ին գիտաժողով: Ջեկ.թեգ. ,,/,, Գյումրի 1994, էջ 15-16:
7. Նոր Օշականի կախիկ-պահպանակը /,,Հանրապետական գիտական նստաշրը- ջան նվիրված 1990-1994թթ ազգագրական և բանագիտական հետազոտութի- յունների արդյունքներին: Ջեկ.թեգ. ,,/,, Երևան 1995, էջ 91-94: /Լ. Ն. Բյազովի հետ համատեղ/

8. Գվինի գլխնաձև պատվանդանները ("Հանրապետական գիտական նստաշրջան նվիրված 1990-1994 թթ...."), Երևան 1995, էջ 94-97: (Ա.Ա. Քալանթարյանի հետ համատեղ)
9. Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. III-I հազ. նվազարևներն ու նրանց հինարևելյան վուզահեռները ("I միացյալ սիմպոզիում Երևանում: Երաժշտությունն ու պարը պատկերագրության մեջ: Չեկ. հիմնադրույթ."), Երևան 1995, էջ 17-19 և 26-27: (Հ.Ս. Քամայանի հետ համատեղ)
10. Գեղեղվտի վանտոսպան վիմափոր դամբարանը ("Հայաստանի Հնագիտական Հուշարձանները, հատոր 16, ՈՒրարտական հուշարձաններ, պրակ III"), Երևան 1995, էջ 80-97: (Լ.Ե. Խաչատրյանի հետ համատեղ)
11. Գվինի կենոսատիպ անոթները և նրանց հինարևելյան վուզահեռները ("ՀՀ-ում 1993-1995 թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված X գիտական նստաշրջան: Չեկ. թեկ."), Երևան 1996, էջ 78-79: (Ա.Ա. Քալանթարյանի հետ համատեղ)
12. Արթիկի գլանաձև կնիքներն ու դրանց միտաննիական վուզահեռները ("Շիրակի պատմա-մշակութային ժառանգությունը: Հանրապետական գիտաժողով: Չեկ. թեկ."), Գլուսրի 1996, էջ 6-7:
13. Раскопки в с. Сарухан ("Археологические Открытия 1981 года"), Москва 1983, стр. 427
14. Раскопки в с. Сарухан ("Археологические Открытия 1984 года"), Москва 1986, стр. 436
15. Arménie (Trésors de l'Arménie ancienne), Paris 1996, p. 64-68, 113
16. Historico-anthropological analysis of group burials of the Nerkin Getashen necropolis (In: "Archaeology of Caucasus: new discoveries and perspectives. International Scientific Session: Abstracts of Papers"), Tbilisi 1997, p. 73-74 (with R. Mkrtchyan)

Աշոտ Տուրսևովիչ Փիլիպոսյան

ПЕЧАТИ АРМЯНСКОГО НАГОРЬЯ В СИСТЕМЕ ДРЕВНЕВОСТОЧНОЙ
 ГЛИНТКИКИ
 (резюме)

ОБЩАЯ ХАРАКТЕРИСТИКА РАБОТЫ

Актуальность темы. Разнообразные по способам использования, морфологии, стилистическим и композиционным особенностям, материалу, способам ношения и пр. печати принадлежат к числу важнейших источников по изучению истории, культуры, искусства, мифологии и пр. древнего Востока. На протяжении последних полутора веков несколько поколений специалистов занималось исследованием печатей в контексте изучения этнокультурных, социально-экономических и историко-политических процессов в эпоху энеолита - бронзы. К сожалению, в силу обстоятельств, обнаруженные на Армянском нагорье экземпляры остались вне сферы исследования; в результате предлагаемые обобщения не носили исчерпывающего характера. Настоящая работа ставит целью заполнение этого пробела, а именно - введение в оборот всего комплекса печатей V-I тыс. до н. э., обнаруженных на Армянском нагорье, классификацию древневосточных печатей и интерпретацию полученных результатов.

Методы исследования. В работе применен метод комплексного изучения, включающий функционально-типологические и историко-сравнительные исследования всего материала.

Источники и обзор литературы. Источником исследования послужили около 4000 печатей и оттисков, происходящих с памятников эпохи энеолита - бронзы различных областей древнего Востока, в том числе Армянского нагорья, и исследованные автором 500 нововыявленных образцов с территории Сирии. Материалы изучались в контексте археологических, культурологических, этнографических, социологических и пр. данных.

В диссертации рассмотрены результаты работ Ж. Менаца, У. Уорда, Л. Де Клерка, О. Вебера, Г. Франкфорта, А. Мортгата, Г. Оффьера, Э. Поралы, П. Амье, Б. Бьюкенена, Б. Брентьеса, Р. Бёмера, П. Александра, В. Афанасьевой, Р. Дайсона, Д. Коллона и др.

Научная новизна работы. Работа по существу является первым в армянской археологии исследованием в данной области. Наиболее существенными новизнами в диссертации являются следующие:

1. Впервые печати V-I тыс. до н. э., с территории Армянского нагорья рассматриваются в контексте 4000 древневосточных печатей и оттисков, причем 103 находки до сих пор не опубликованы и впервые вводятся в научный оборот.

2. Предложены новые принципы классификации печатей, реализованные на совокупном древневосточном материале.

3. Впервые печати и оттиски древнего Востока рассматриваются не только с искусствоведческой, мифологической и др. точек зрения, но и с историко-культурной позиции. Подчеркивается их роль в изучении социально-экономических и военно-политических процессов.

Структура работы. Диссертация состоит из введения, двух глав (каждая из которых подразделена на пять параграфов), заключения, списка сокращений, списка использованной литературы, включающей 455 наименований, списка иллюстраций и 70 иллюстрированных таблиц (включая 4 карты и 3 графика).

СОДЕРЖАНИЕ РАБОТЫ

В Введении представлены цель и задачи исследования, теоретические и методические основы работы, научная новизна и практическая ценность диссертации.

Глава I. Классификация и историко-хронологическое изучение древневосточных печатей

Древневосточные печати по способу применения подразделены на четыре группы:

I группа - печати-штампы (для получения одного цельного оттиска одним нажатием);

II группа - цилиндрические печати (для получения ряда повторяющихся изображений путем наката);

III группа - конические печати (для получения комбинированного оттиска, воспроизводящего изображения как на корпусе /получаемые накатом/, так и на основании ^и печати /получаемые нажатием/);

IV группа - призмovidные ^и печати (также для получения комбинированного оттиска, воспроизводящего изображение как с граней корпуса /получаемые последовательным нанесением отпечатков/, так и основания призмы).

По композиционным особенностям изображений печати разделены на четыре варианта:

I вариант - печати с геометрическими (знаковыми) изображениями;

II вариант - печати с одиночными зоо- или антропоморфными изображениями;

III вариант - печати со сценарными композициями;

IV вариант - печати с надписями в сочетании с теми или иными изображениями или композициями.

Вопросы происхождения, распространения, общих и специфических черт глиптики для каждого из регионов древнего Востока (Эгеида, Малая Азия, Сиро-Палестина, Египет, Армянское нагорье, Месопотамия, Иранское нагорье, Аравийский полуостров, долина Инда) VII-I тыс. до н. э. рассматриваются согласно выделенным группам и вариантам.

Глава II. Печати как предметы повседневного пользования.

Символы власти и культа

В первом параграфе рассматриваются социально-экономические предпосылки возникновения печатей и формирования глиптики как отдельной самостоятельной отрасли ремесленного производства.

Во втором параграфе на основе археологических материалов и письменных источников выявлены разнообразные сферы функционирования печатей (при оформлении юридических документов и заключении торговых операций, при орнаментации тканей и керамических сосудов, татуировании человеческого тела, в качестве украшения в ожерельях и пр.).

Третий параграф посвящен способам ношения древневосточных печатей (на шею, на голову - в прическе, на груди, на поясе, на запястьях, на пальцах и пр.).

В четвертом параграфе рассматриваются приписывавшиеся печатям в празднично-обрядовой системе сверхъестественные (целительные, охранительные и пр.) свойства, обусловленные как изображениями и магическими текстами, выгравированными на печатях, так и определенными разновидностями камня (из которых изготавливались печати), которым, в свою очередь, приписывались охранительные свойства.

В пятом параграфе печати рассматриваются в качестве символа социального статуса. Если в энеолитическую эпоху печати принадлежали преимущественно взрослым или пожилым женщинам, то начиная с эпохи бронзы владельцами печатей могли стать лица определенного социального положения без половозрастных ограничений.

Заключение. Классификация печатей и оттисков древнего Востока и реконструируемая на этой основе панорама развития глиптики региона позволяют рассматривать печати также в контексте военно-политических, юридических и дипломатических отношений. С этой точки зрения совершенно очевидным и в информационном отношении чрезвычайно ценным

становится "неожиданное" появление на Армянском нагорье египетских, касситских, митанийских и ассирийских печатей.

В целом, древневосточные печати имели ^и полуфункциональное назначение, проявляющееся в их конструктивных особенностях, и служили для нанесения оттисков на предметы самого разного характера с целью обозначения персональной принадлежности, фиксации права, личной собственности в различных ситуациях экономической, юридической, социальной, политической, религиозной жизни.

Сформировавшись в раннеземледельческой среде Сиро-Палестины и Месопотамии, печати постепенно распространились по всем регионам древнего мира, проникли в самые разные сферы общественной и экономической жизни, сохранив свою роль и значение до наших дней.

ASHOT S. PILIPOSYAN

THE SEALS OF ARMENIAN HIGHLAND
WITHIN THE ANCIENT EAST GLYPTIC SYSTEM
(summary)

In the present research approximately 800 seals and seal-impressions of the Ancient East, dated 7-1 millennia B.C., have been studied, out of which 103 seals have been studied scientifically for the first time. In the research the seals were classified according to a four subgroup system: 1. Stamp-seals, 2. Cylinder seals, 3. Conic seals (stamp-cylinder), 4. Prismatic seals.

In the framework of that system different issues are discussed and explained which are related to the role and application of seals in the historic and cultural processes of the Region.

The present work can be used by the specialists who deal with issues of Ancient Oriental history, culture, art, archaeology, mythology, gliptic etc.



,, Էթնոս,, Էթնո-մշակութային
զիտական հետազոտությունների
կենտրոնի հրատարակչություն

տպաքանակ -120